«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ» ԲՈՒՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրա Ազատյան

Մուտք

Պատմագրությունը պատմագիտության ինքնուրույն և յուրահատուկ բնագավառներից է, որը հետազոտում է, թե պատմագիր, պատմաբան կամ այլ հեղինակներն ինչպես են լուսաբանել որևէ պատմագիտական հիմնահարց, որքանով են նրանք հավատարիմ եղել պատմական ճշմարտացիությանն ու օբյեկտիվությանը, արդյո՞ք տուրք են տվել քաղաքական նպատակահարմարությանը, թե՝ ոչ, և այլն: Խնդիրն այն է, որ պատմական անցյալի մի շարք հիմնահարցեր, ըստ պատմական ժամանակաշրջանի ու գաղափարական-քաղաքական նպատակահարմարության, ինչպես նաև տվյալ հեղինակի հայացքների և սուբյեկտիվ նախասիրությունների, հաճախ տարբեր կերպ են ներկայացվել, մեկնաբանվել ու գնահատվել, երբեմն պատմական փաստերն ու իրադարձությունները գլխիվայր շուռ են տրվել ու աղավաղվել, այդ կերպ խեղաթյուրելով իրական պատմությունը[1]: Այս տեսանկյունից առավել կարևորվում է պատմագրության դերը, քանզի այն օգնում է անցյալի պատմության փորձի ու դասերի հիման վրա լավ հասկանալու ներկան, նրա զարգացման միտումներն ու ճիշտ կողմնորոշվելու ապագայում: Ուստի, պատմագրությունը, լինելով պատմագիտության պատմությունն ուսումնասիրող օժանդակ գիտություն, ուսումնասիրում է պատմագիտական պատկերացումների ամբողջությունը և, վերլուծելով պատմագիտական աշխատությունները, պատմաբանների ուշադրությունը սևեռում է որոշակի խնդիրներ վեր բարձրացնելու, ուսումնասիրելու և համարժեք լուծումներ գտնելու վրա:

---

[1] Տե՛ս **Հակոբյան Ա.**, ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2014, էջ 3:

Դասընթացի նշանակությունն ու արդիականությունը

«Հայոց պատմության պատմագրություն» դասընթացը «Պատմություն» կրթական ծրագրի կարևորագույն առարկաներից է: Այն ունի կարևոր գիտա-քաղաքական նշանակություն: Համաշխարհային պատմագիտության, մասնավորապես, ամերիկյան, եվրոպական, թուրք-ադրբեջանական, ինչպես նաև խորհրդային պատմագրության մեջ այնպիսի տեսություններ են առաջ քաշվում մեր ժողովրդի պատմական անցյալի վերաբերյալ, որոնց նպատակը պարզապես հայ ժողովրդի պատմության որոշ դրվագների նենգափոխումն ու ազգային գաղափարախոսությանը հարված հասցնելն է եղել: Ուստի, հայոց պատմության յուրաքանչյուր շրջափուլի անկողմնակալ ներկայացմանը, ինչպես նաև ուսանողներին համապատասխան գիտելիքներով օժտելուն միտված ցանկացած դասընթաց կարող է նպաստել համարժեք գիտելիքների ամրապնդմանն ու դրանց կիրառականության ապահովմանը[1]:

Ինչ վերաբերում է պատմագիտության գործառույթների[2] տեսանկյունից «Հայոց պատմության պատմագրություն» դասընթացի արդիականությանը, ապա հարկ է նշել, որ գիտաճանաչողական գործառույթի տեսանկյունից այն կոչված է ամբողջական ու համակարգված գիտելիքներ հաղորդել հայոց պատմության պատմագրության անցած փուլերին: Գաղտնիք չէ, որ հայոց պատմության պատմագրության մեջ առանձնանում են տարբեր փուլեր, որոնք իրենց հերթին հնարավորություն են ընձեռում ընդգծելու պատմագրության խոշոր էտապների ինքնատիպությունը:

Հայտնի թեզ է, որ առանց անցյալի հիշողության ապագայի տեսլական չի կարող լինել, քանզի պատմական հիշողությունը քաղաքացիական որակներ է դաստիարակում՝ հնարավորություն ընձեռելով կողմնորոշվելու ներկայի բարդ իրադրություններում[3]:

---

[1] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, «Հայաստանը Բագրատունյաց դարաշրջանում» դասընթացի ուսումնամեթոդական սկզբունքները և առանձնահատկությունները // «Պատմություն և քաղաքականություն», Երևան, 2020, №1 (6), էջ 61:

[2] Պատմագիտության գործառույթների մասին մանրամասն տե՛ս **Ղազարյան Ա.**, Պատմության առարկան, գործառույթները և հիմնական մեթոդները // «Բանբեր Երևանի համալսարանի», «Փիլիսոփայություն, հոգեբանություն», 2017, № 3, էջ 45-57:

[3] Տե՛ս **Ղազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 49:

Ուստի, պատմության հասարակական հիշողություն լինելու գործառույթի տեսանկյունից այս դասընթացը կոչված է համակարգված կերպով ներկայացնելու հայ պատմագրության նվաճումներն ու ձեռքբերումները:

Հայոց պատմության պատմագրությունն ամփոփում և ընդհանրացնում է նախորդ սերունդների կատարած աշխատանքը, դրա հետ մեկտեղ վեր է բարձրացնում այն գիտական խնդիրները, որոնք տակավին չեն ուսումնասիրվել կամ ոչ անաչառ կերպով են ուսումնասիրվել և ունեն գիտական հետազոտության կարիք: Այլ կերպ ասած՝ պատմագրությունը միաժամանակ նպաստում է գիտական-քննադատական մտքի զարգացմանն ու խորացմանը՝ բացահայտելով պատմագիտական գրականության մեջ տեղ գտած գիտական, գաղափարական ու մեթոդաբանական սխալները: Ի վերջո պատմագրության հիմնական խնդիրներից մեկը հենց պատմաբանի մոտ անցյալի պատմագիտական ժառանգությանը քննադատական վերաբերմունք ցուցաբերելն է և պատմության կեղծարարության դեմ պայքարելը[1]:

Խորհրդային իշխանության տարիներին հայոց պատմության պատմագրության հիմնահարցերի վերաբերյալ ամբողջական ու համակարգված աշխատություններ շատ չեն ստեղծվել[2], ի տարբերություն անկախության ժամանակաշրջանի, երբ հրատարակվել են զգալի թվով ուսումնասիրություններ[3], որոնցում համակողմանի անդրադարձ է կատարվել հայ

---

[1] Տե՛ս **Հարությունյան Շ.**, Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 1920-1963, Ուրվագծեր,Երևան, 1967, էջ 4:

[2] Տե՛ս **Սարգսյան Ե.**, **Սահակյան Ռ.**, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, **Հարությունյան Շ.**, նշվ. աշխ., *նույնի*՝ Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964-1988, Ուրվագծեր, Երևան, 1990, **Բաբայան Լ.**, Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի պատմության ուսումնասիրությունը սովետահայ պատմագրության մեջ (Ուրվագծեր), Երևան, 1970, *նույնի*՝ Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Երևան, 1977, *նույնի*՝ Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), Երևան, 1981, *նույնի*՝ Դրվագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրության, Երևան, 1984:

[3] Տե՛ս **Ալեքսանյան Ս.**, Արևելյան Հայաստանի նոր շրջանի ագրարային հարաբերությունների պատմագրությունը, Երևան, 1991, **Զուլալյան Մ.**, Հայոց պատմության խեղաթյուրումը արդի թուրք պատմագիտության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995,

պատմագրության տարբեր փուլերին և հիմնահարցերին:

«Հայոց պատմության պատմագրություն» դասընթացի ուսուցմամբ մենք նպատակ ունենք ուսանողներին ամփոփ և համակարգված ներկայացնել պատմագրության կազմավորման ընթացքը, փուլերը, նրա բնութագրական գծերը, առանձնահատկությունները, ինչպես նաև ներկա վիճակը, վերլուծել և գնահատել պատմագրության տարբեր փուլերի նշանավոր ներկայացուցիչների պատմագիտական ժառանգությունը:

Դասընթացում կիրառվող հիմնական մոտեցումները

Ընդհանրապես կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է լինում ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ, որոնք իրենց հերթին օգնում են հասնել ծրագրի վերջնարդյունքներին, միաժամանակ նպաստելով ուսանողների կարողունակության ձեռքբերմանը:

Վերջին շրջանում դասավանդման կարևորագույն պահանջներից է

Բարսեղյան Լ., Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագրության մեջ, Երևան, 1996, **Կարապետյան Մ.**, Հայոց 1915-1916 թվականների ցեղասպանության հարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 1998, *նույնի՝* Հայոց 1915-1916 թվականների հիմնահարցերը հետխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2005, **Կարապետյան Մ.**, **Գևորգյան Է.**, XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման հիմնահարցերը մինչխորհրդային հայ պատմագրության մեջ, Երևան, 2008, **Կարապետյան Մ.**, **Գևորգյան Է.**, **Մելքոնյան Է.**, XIX դարի երկրորդ կեսի հայ ազգային-ազատագրական շարժման խորհրդահայ պատմագրությունը (1921-1991 թթ.), Երևան, 2009, **Կարապետյան Մ.**, **Գևորգյան Է.**, **Մելքոնյան Է.**, **Աբգարյան Ա.**, Հայոց Մեծ եղեռնի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2010, **Քառյան Ս.**, Հայաստանի առաջին հանրապետության պատմության պատմագրություն, Երևան, 2003, **Հովհաննիսյան Հ.**, Հայագիտությունը Ռուսաստանում (պատմագիտություն, XIX դար), Երևան, 2004, **Սարուխանյան Ն.**, Հայ պատմագիտությունը XIX դարում և XXդարասկզբին, Երևան, 2013, *նույնի՝* Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, Երևան, 2015, *նույնի՝* Խորհրդահայ պատմագիտությունը 1920-1930-ական թվականներին, Երևան, 2016, Հակոբյան Ա., ՀՍԽՀ 1921 թ. ներքաղաքական կյանքի պատմության հիմնահարցերը հայ պատմագրության մեջ, Երևան, 2014, **Պողոսյան Վ.**, Էջեր հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության, Երևան, 2015, **Հովհաննիսյան Պ.**, Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2017, **Հովհաննիսյան Լ.**, Հայկական հարցի 1915-1923 թթ. պատմության հիմնահարցերի լուսաբանումը հայաստանյան պատմագիտության մեջ (1991-2015 թթ.), Երևան, 2020:

դարձել ուսուցման գործընթացում ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը: Ահա ըստ այդ չափանիշի՝ ուսուցումը դասակարգվում է պասիվ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդների, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին կիրառվում է «Հայոց պատմության պատմագրություն» դասընթացը վարելիս՝ ելնելով դասընթացի թեմաների առանձնահատկություններից: Հիմնականում տուրք ենք տալիս ակտիվ ուսուցման մոտեցմանը, որով նպատակ ենք հետապնդում դասապրոցեսի ժամանակ անընդհատ ապահովել ուսանողի մասնակցությունը: Այս մոտեցման կիրառումը մեր կարծիքով ավելի անմիջական և ուղղակի է դարձնում ուսանողի ներգրավումը ուսումնառության գործընթացին, քան այլ մոտեցումների կիրառումը: Սրանով ուսանողն ընդգրկվում է առանձին աշխատանքում, որով նրան ինքնուրույն մտածելու հնարավորություն է տրվում: Այս մոտեցման շրջանակում խրախուսվում է քննարկումը որպես ակտիվ ուսուցման կարևորագույն մարտավարություն[1]:

Դասախոսությունն իրականացնում ենք բանավոր՝ ուսանողներին նշումներ կատարելու հնարավորություն տալով, հեղինակային վերլուծությունները համադրելով աշխատություններից կատարված մեջբերումներով: Դասընթացն իր մեջ պարունակում է հետազոտական բաղադրիչ, որը հնարավորություն է տալիս տարբեր մեթոդական մոտեցումների միջոցով իրականացնել ուսանողների հետազոտական կարողությունների զարգացումը: Հետազոտական աշխատանքի նպատակն է խթանել ուսանողի անհատական և խմբային հետազոտություն կատարելու ունակությունները և նպաստել նրա մասնագիտական հմտությունների զարգացմանը: Հետազոտական աշխատանքներում պետք է հիմնավորված լինեն թեմայի արդիականությունը, նպատակը, խնդիրները, իսկ աշխատանքը պետք է կատարված լինի առաջադրված խնդիրներին համապատասխան: Աշխատանքի արդյունքները պետք է լինեն հավաստի և հիմնավորված: Կատարված հետազոտական աշխատանքներն ուսանողների կողմից ներկայացվում ու քննարկվում են լսարանում՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով մնացած ուսանողներին ևս մասնակից դառնալու տարբեր թեմատիկ բանավեճերի, որը հետապնդում է մեկ նպատակ՝ խթանել ուսանողի բանավեճային-պատմաքննական մտածողությունը:

---

[1] Տե՛ս **Եղիազարյան Ա.**, նշվ. աշխ., էջ 65:

Դասընթացի հիմնական թեմաները

«Հայոց պատմության պատմագրություն» դասընթացի թեմաները ձևակերպված են այնպես, որ ուսանողներին ամբողջական պատկերացում տան հայ պատմագիտության զարգացման էտապների ու նշանավոր ներկայացուցիչների պատմագիտական ժառանգության և հայացքների վերաբերյալ:

«Հայոց պատմության պատմագրություն առարկայի բովանդակությունը և խնդիրները» թեման ուսանողներին պատկերացում է տալիս «պատմություն», «պատմագիտություն» և «պատմագրություն» հասկացությունների հիմնական իմաստների մասին[1], հստակեցվում են առարկայի նպատակն ու խնդիրները: Վերոնշյալ հասկացություններն ուսանողներին բացատրելուց հետո հատուկ ընդգծում ենք պատմագրության դերը, քանի որ այն ամբողջացնում է նախորդ սերունդների կատարած աշխատանքը, սրա հետ մեկտեղ փաստելով այն գիտական խնդիրները, որոնք դեռևս ունեն հետազոտության կարիք: Այս թեմայի ներքո համառոտ ներկայացվում է նաև «Հայոց պատմության պատմագրություն» և «Հայոց պատմության աղբյուրագիտություն» դասընթացների կապը, քանզի շատ հաճախ վերջիններիս ուղիները հատվում են, բայց խնդիրները նույնը չեն: Ուստի պարզաբանում ենք, որ աղբյուրագիտությունը զբաղվում է սկզբնաղբյուրների հայտնաբերմամբ, ուսումնասիրում է սկզբնաղբյուրները և նրանց օգտագործման եղանակները[2], իսկ պատմագրությունը հետևում է սկզբնաղբյուրների հրատարակության և վերլուծության ասպարեզում աղբյուրագետների առաջընթացին, քանզի նրանց կատարած աշխատանքը կարող է դառնալ պատմագրական ուսումնասիրությունների առարկա:

«Պատմական գիտելիքների առաջացումը Վանի թագավորությունում» թեմայի շրջանակներում ներկայացվում է պատմական գիտելիքների ի հայտ գալը Վանի թագավորությունում, պարզաբանվում տվյալ ժամանակահատվածում տիրապետող դարձած պատմության աստվածակենտրոն ընկալումը, քանզի գաղտնիք չէ, որ այդ ժամանակահատվա-

---

[1] Տե՛ս **Սարգսյան Ս.**, Պատմություն, պատմագիտություն, պատմագրություն հասկացությունները // «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, №2(5), 2012, էջ 120-123:

[2] Տե՛ս **Մելիք-Բախշյան Ստ.**, Հայոց պատմության աղբյուրագիտություն, Երևան, 1996, էջ 3:

ծում պատմությունն ընկալվում էր որպես աստվածների ջանքերով իրականացված գործողությունների շարք[1]: Թեմայի շրջանակում բացատրվում է նաև ուրարտերեն և ասորերեն սեպագիր արձանագրությունների տարբերությունները:

«Նախամաշտոցյան շրջանի հայ պատմագրությունը» թեման մատուցելիս նախ ներկայացնում ենք Արտաշեսյան թագավորության ժամանակաշրջանում հայ պատմագրության ձևավորման նախադրյալները, այնուհետև անդրադառնում ենք նախամաշտոցյան շրջանի հայ պատմագրության մեջ ի հայտ եկած երկու ուղղությունների՝ արքունական (Մետրոդորոս Սկեպսացի, Արտավազդ, Մար Աբաս Կատինա) և մեհենական (Օղյումպ, Բարդածան) պատմագրության ներկայացուցիչներին[2]:

«Հայ միջնադարյան պատմագրությունը. բնութագրական գծերն ու առանձնահատկությունները» թեման ուսուցանելիս նախ պարբերացնում ենք հայ միջնադարյան պատմագրությունը չորս փուլի՝ կազմավորման (V-VIII դարեր), զարթոնքի (IX-XIV դարեր), անկման (XIV-XVI դարեր) և նոր վերելքի (XVII-XVIII դարեր), որից հետո ներկայացնում ենք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պատմագրության առանձնահատկությունները և անդրադառնում նշանավոր ներկայացուցիչների երկերի պատմագիտական արժեքին[3]: V-VIII դարերի պատմագրությանը հատուկ էր բազմաժանրությունը՝ պատմություն, ճառ, թուղթ, վարքագրություն, քարոզ: Պատմագրության այս փուլում առանձնացնում ենք հատկապես V դարը, երբ ասպարեզ են իջնում առաջին «Պատմութիւն Հայոց»-ները, որոնց գլուխգործոցը Մովսես Խորենացու երկն է համարվում: Թեմայի շրջանակում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում պատմահայր

---

[1] Տե՛ս **Հմայակյան Ս.**, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, **Մովսիսյան Ա.**, Վանի թագավորություն (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ), Երևան, 1998, **Пиотровский Б.**, История и культура Урарту, Ереван, 1944; Ванское царство (Урарту), М., 1959.

[2] Տե՛ս **Սարգսյան Գ.**, Նախամեսրոպյան շրջանի պատմագրությունը // «Պատմա-բանասիրական հանդես», 1969, թ. 1, էջ 107-126, **Մովսիսյան Ա.**, Հայկական մեհենագրություն, Երևան, 2003, *նույնի*՝ Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003:

[3] Տե՛ս **Բաբայան Լ.**, Դրվագներ Հայաստանի վաղ ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (V-VIII դարեր), Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դարեր, Երևան, 1976, էջ 7-139, **Հովհաննիսյան Պ.**, նշվ. աշխ., էջ 115-155:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» կառուցվածքին և հիմնական համակարգերին, բարձր է գնահատվում նա՝ իբրև հայ պատմագրության հիմնադիր: Քննարկման հիմնախնդիր ենք դարձնում Խորենացու անձը և գործը, ներկայացնում և վերլուծում հայագիտության մեջ նրան և նրա գործունեությանը տրված գնահատականները և պարզաբանում դրանք[1]: Այս պատմափուլի ուսուցումն ավարտում ենք VIII դարի միակ պատմագիր Ղևոնդ վարդապետի պատմագիտական երկի ներկայացմամբ ու արժևորմամբ:

Կազմավորման շրջանի պատմագրությունը ներկայացնելուց հետո անդրադառնում ենք զարթոնքի ժամանակաշրջանի պատմագրությանը, երբ այն՝ պայմանավորված անկախ պետականության գոյությամբ, բուռն վերելք ապրեց: Այս շրջանի պատմագրական երկերը դարձյալ պատկանում էին տարբեր ժանրերի, մասնավորապես Հովհաննես Դրասխանակերտցին և Կիրակոս Գանձակեցին պահպանեցին «Պատմութիւն Հայոց» շարքը: Նախորդ ժամանակաշրջանին բնորոշ ժանրերից պահպանվում էին նաև վարքագրությունը (Մեսրոպ Վայոցձորեցի) և թուղթը (Գրիգոր Մագիստրոս): Այս ժամանակաշրջանում ի հայտ եկած նոր ժանրերից էին տիեզերական և տոհմական պատմությունները, ինչպես նաև ժամանակագրություն-տարեգրությունները: Տիեզերական պատմություն շարադրելու բնագավառում աչքի էին ընկնում Ստեփանոս Տարոնեցի Ասողիկը, Մխիթար Անեցին և Վարդան Արևելցին, ինչ վերաբերում է տոհմական պատմությանը, ապա այդ ժանրով ստեղծագործել են Թովմա Արծրունին, Մովսես Դասխուրանցին և Ստեփանոս Օրբելյանը:

Չնայած դասախոսության շրջանակում անդրադառնում ենք վերոնշյալ բոլոր հեղինակների աշխատություններին, բայց մեծագույն տեղ հատկացնում ենք Հովհաննես Դրասխանակերտցուն՝ որպես հայ միջնադարյան պատմագրության զարթոնքի ժամանակաշրջանի նշանավոր հեղինակի: Թեման մատուցելիս նրա աշխատությունը կարևորում ենք հատկապես նրանով, որ այն Խորենացու երկից հետո հայոց ամբողջա-

---

[1] Տե՛ս **Մալխասյան Ստ.**, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, **Սարգսյան Գ.**, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» ժամանակագրական համակարգը, Երևան, 1965, *նույնի՝* Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, *նույնի՝* Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը», Երևան, 1991, **Հովհաննիսյան Պ.**, նշվ. աշխ., էջ 173-227:

կան պատմության շարադրման հաջորդ փորձն էր[1]:

Հարուստ և բազմաժանր պատմագիտական նվաճումներն արժևորելուց հետո անդրադառնում ենք հայ պատմագրության հաջորդ փուլին, որը հիմնովին տարբերվում էր նախորդ ժամանակաշրջանից: Նախ XIV-XVI դարերի հայ պատմագիտական մտքի ծանր վիճակում հայտնվելը պարզաբանում ենք հայոց պետականության բացակայության և մշակույթի ընդհանուր անկման պայմաններով, այնուհետև ընդգծում, որ պատմագրության անկման այս ժամանակաշրջանում հայ իրականության մեջ չկային քիչ թե շատ նշանակալի պատմագրական երկեր ստեղծելու պայմաններ: Հենց դրանով ենք բացատրում այն հանգամանքը, որ պատմագիտական աշխատություններին փոխարինում են ձեռագրերի հիշատակարաններն ու մանր ժամանակագրությունները: Չլինելով զուտ պատմագիտական բնույթի ստեղծագործություններ՝ հիշատակարանները կարճ, ճիշտ և համառոտ շարադրում էին իրենց ժամանակների քաղաքական անցուդարձերը, սոցիալական, մշակութային և հասարակական հարաբերություններին առնչվող իրողությունները[2]:

Այնուհետև անդրադառնում ենք XVII-XVIII դարերի ընթացքում հայ պատմագիտական մտքի նոր վերելքի համար հանդես եկած քաղաքական, տնտեսական և մշակութային նախադրյալներին: Այստեղ կարևորում ենք թուրք-պարսկական պատերազմի ավարտը, որից հետո տարածաշրջանում հաստատված տևական խաղաղությունը հող է նախապատրաստում տնտեսական և մշակութային առաջընթացի համար: Թեման մատուցելիս կարևորում ենք հայ իրականության մեջ ի հայտ եկած նոր հասարակախավի՝ վաճառականության դերը: Վերջինս մերձենալով հոգևոր դասի և նոր ձևավորվող հայ մտավորականության հետ, սկսում է դերակատարություն ունենալ անգամ մտավոր կյանքում: Այս ժամանակաշրջանի պատմագրության վերելքում նշանակալից էր նաև հոգևորականության դերը, քանզի նրա ներկայացուցիչները ստեղծում են պատմական երկեր:

---

[1] Տե՛ս **Սարգսյան Ա.**, Հովհաննես Դրասխանակերտցու «քերթողական արվեստի» շուրջ // «Պատմա-բանասիրական հանդես», 1981, թ. 2, էջ 164-177, *նույնի*՝ Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց Պատմությունը» և Մովսես Խորենացին, Երևան, 1991:

[2] Տե՛ս **Բաբայան Լ.**, Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX-XIII դարեր), Հայոց պատմություն, ԳԱԱ ՊԻ, հ. II, գիրք երկրորդ, Երևան, 2014, էջ 435-454:

Ահա այս ամենը պարզաբանելուց հետո ուսանողների ուշադրությունը սևեռում ենք մի կարևորագույն հանգամանքի վրա, այն վերաբերում է XVII դարի առաջին կեսին հայ պատմագրության մեջ նկատելի դարձած հայության մասնատված վիճակին, Հայաստանի՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև բաժանված լինելու խնդրին: Մասնատված այդ վիճակը Հայաստանի երկու հատվածների հասարակական, հոգևոր և մշակութային կյանքի զարգացման համար տարբեր պայմաններ էր ստեղծում: Հենց այդ հանգամանքից ելնելով XVII դարի պատմագրության ներկայացուցիչներին պայմանական սկզբունքով բաժանում ենք երկու խմբի: Այսպես, արևմտահայ իրականության մեջ պատմագրության նոր վերելքի նշանավոր ներկայացուցիչներից անդրադառնում ենք Գրիգոր Դարանաղցու և Երեմիա Քյոմուրճյանի պատմագիտական ժառանգությանը, իսկ արևելահայ իրականությանն առնչվող պատմագիրներից անդրադառնում ենք Առաքել Դավրիժեցու և Զաքարիա Քանաքեռցու երկերին:

Ինչ վերաբերում է XVIII դարի սկզբների պատմագրությանը, ապա այստեղ արժևորում ենք դարի սկզբին ի հայտ եկած պատմագիրների նոր սերնդի ազատագրական պայքարի գաղափարախոսության մշակման ուղղությամբ կատարած աշխատանքը: Այս համատեքստում կարևորում ենք Եսայի Հասան-Ջալալյանի, Պետրոս դի Սարգիս Գիլանենցի, Ստեփանոս Շահումյանի, Աբրահամ Երևանցու երկերը: Դարի երկրորդ կեսին հանդես են գալիս հեղինակներ, որոնք ձեռնամուխ են լինում առանձին երկրների պատմության շարադրմանը: Այդ տեսանկյունից առանձնանում են Թովմաս Խոջամալյանն ու Խաչատուր Ջուղայեցին: Այնուհետև անդրադառնում ենք դարի ընթացքում հանդես եկած հայոց եկեղեցու բարձրաստիճան ներկայացուցիչներ Ղազար Ջահկեցու և Հակոբ Նալյանի աշխատություններին: Վերջիններս փորձել են շարադրել հայոց կաթողիկոսական աթոռի և հայ ժողովրդի ամբողջական պատմությունը, սակայն այդ գործում առավել հաջողել են դարի երկրորդ կեսի հեղինակներ Սիմեոն Երևանցին ու Միքայել Չամչյանը:

«Հայ նոր պատմագիտության առաջընթացը XVIII դարի վերջերին. Միքայել Չամչյան» թեմայի ուսուցումը կատարում ենք՝ նախ նշելով, որ XVIII դարի երկրորդ կեսին հայ պատմագիտական միտքը թևակոխում է իր զարգացման նոր փուլը, քանի որ այս շրջանում նախորդ շրջանների պատմագիտության ավանդույթների վերականգնման հետ միաժամա-

նակ զգալի աշխատանք է կատարվում նաև հայ ժողովրդի պատմական դարավոր ուղու բացահայտման և արժևորման ուղղությամբ: Այնուհետև բացատրում ենք, թե ինչպես էին XVII-XVIII դարերում պարսկա-թուրքական տիրապետության դեմ հայ ժողովրդի սկսած ազատագրական շարժումներն ու պայքարը, հասարակական-քաղաքական, մշակութային կյանքի աշխուժացումը հայ պատմագիտությանը պարտադրում նոր թեմատիկա և օրվա պահանջ դարձնում հայ ժողովրդի ամբողջական պատմություն ստեղծելու հարցը: Հենց այս տեսանկյունից էլ արժևորում ենք Մ. Չամչյանի աշխատանքը՝ ներկայացնելով նրա ծանրակշիռ աշխատության ստեղծման պատմական պայմաններն ու նպատակները, պատմագիտական ժառանգությունը, հայացքները և ընդհանրապես նրա բերած նորույթները հայ պատմագրության մեջ[1]: Աշխատության հատորները հանգամանորեն վերլուծելուց հետո անդրադառնում ենք Մ. Չամչյանի աշխատության մեջ տեղ գտած պատմականությունից զուրկ որոշ գաղափարաբանական մեկնաբանությունների և անճշտությունների: Մասնավորապես ընդգծում ենք այն հանգամանքը, որ հեղինակը, որպես կաթոլիկ հոգևորական, Հայաստանի պատմությունը նախևառաջ դիտարկում էր իբրև եկեղեցու պատմություն՝ ձգտելով հիմնավորել, որ հայերը միշտ էլ հակված են եղել կաթոլիկությանը:

«Հայ պատմագիտությունը XIX դարում» թեման ուսուցանելիս նախ նշում ենք, որ XIX դարի թե՛ առաջին և թե՛ երկրորդ կեսին մեծանում է հայոց պատմության խնդիրների նկատմամբ օտար հեղինակների հետաքրքրությունը: Մասնավորապես ֆրանսիական պատմագիտական դպրոցի ներկայացուցիչներ Անտուան Սեն Մարտենի, Էդուարդ Դյուլորիեի և Վիկտոր Լանգլուայի ուշադրությանն են արժանանում հայ ժողովրդի միջնադարյան պատմության հիմնահարցերը: Միաժամանակ նկատել ենք տալիս, որ XIX դարի առաջին կեսին Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների ջանքերով թարգմանվում և հրատարակվում են ֆրանսիական նշանավոր հեղինակների երկերը: Այնուհետև ներկայացնում ենք XIX դարի առաջին կեսի հայ պատմագրության

---

[1] Տե՛ս **Ութուջյան Ա.**, Միքայել Չամչյանի պատմագիտական հայացքների գնահատման հարցի շուրջ // «Բանբեր Երևանի համալսարանի», 1981, №2, էջ 144-151, *նույնի*՝ Միքայել Չամչյան (կյանքի և գործունեության համառոտ ուրվագիծ), 1988, №9, էջ 71-85, **Սարուխանյան Ն.**, Հայ պատմագիտությունը XIX դարում և XX դարասկզբին, էջ 10-163:

առաջընթացի նախադրյալները, ընդհանուր պատմության թարգմանական և ինքնուրույն ձեռնարկների հանդես գալը և այս էտապի նշանավոր հեղինակներից Ղուկաս Ինճիճյանի և Հովսեփ Գաթըրճյանի պատմագիտական ժառանգությունն ու հայացքները[1]:

Դարի առաջին կեսի պատմագիտական նվաճումներն ամփոփելուց հետո անցնում ենք դարի երկրորդ կեսի պատմագիտական ձեռքբերումների ներկայացմանը: Այստեղ հատկապես կարևորում ենք հայագիտական ամբիոնների առկայությունը Կազանի, Սանկտ Պետերբուրգի համալսարաններում, որտեղ աշխատում էին հայ պատմագիտության նշանավոր ներկայացուցիչներից Ստ. Նազարյանցը և Ք. Պատկանյանը: Բարձր ենք գնահատում նաև Մ. Էմինի և Գր. Խալաթյանցի դերը, որոնք Լազարյան ճեմարանում սկզբնաղբյուրների հրատարակության, թարգմանության և հետազոտության ուղղությամբ մեծ աշխատանքներ են կատարել: Ձեռագրերի հավաքման, պահպանման և գիտական հետազոտության ասպարեզում արժևորում ենք Հակոբոս Տաշյանի գործունեությունը, իսկ Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրության բնագավառում ընդգծում ենք Ալ. Երիցյանի և Ն. Մառի դերը: Այս ժամանակաշրջանում հրատարակվում են նաև արխիվային փաստաթղթերի առաջին ժողովածուները: Հիշատակման արժանի է հատկապես Կ. Եզյանը, որը հրատարակել է Պետրոս Մեծի ու հայ ժողովրդի փոխհարաբերություններին նվիրված ստվարածավալ ժողովածու: Այնուհետև մեկնաբանում ենք այս պատմափուլում հայ պատմագիտության մեջ ի հայտ եկած քննադատական ուղղությունը, որի հիմնադիրը հանդիսանում էր Ա. Գարագաշյանը:

Թեմայի շրջանակում ներկայացնում ենք նաև XIX դարի երկրորդ կեսի հայ պատմագիտության մեջ առանձնահատուկ տեղ զբաղեցրած Ղ. Ալիշանի պատմագիտական ժառանգությունը: Մասնավորապես կարևորում ենք նրա դերը միջնադարյան մատենագիրների երկերի, ինչպես նաև հայ գաղթավայրերի պատմության ուսումնասիրության և հրատարակության բնագավառում, որից հետո անդրադառնում ենք Ալիշանի պատմ-աշխարհագրական բնույթի աշխատությունների վերլուծությանը՝ հանգելով այն եզրակացության, որ ի դեմս նրա հայ պատմագրությունն ունեցավ պատմ-աշխարհագրության ուղղության ամենանշանավոր ներկայացուցիչը:

---

[1] Տե՛ս **Սարուխանյան Ն.**, նշվ. աշխ.:

«Հայ պատմագիտությունը XX դարում» թեմայի շրջանակում անդրադառնում ենք XX դարի հայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչներից՝ Մ. Օրմանյանի, Ն. Ադոնցի, Հ. Մանանդյանի, Լեոյի, Հ. Զորյանի, Թ. Ավդալբեկյանի, Խ. Սամուելյանի, Աշ. Հովհաննիսյանի պատմագիտական ժառագությանը[1]: Այստեղ մեծ ուշադրություն ենք դարձնում հատկապես Լեոյի և Աշ. Հովհաննիսյանի՝ 1920-ական թվականներին հրատարակած աշխատություններին, որոնք գրված էին Հոկտեմբերյան հեղափոխության առաջ բերած քաղաքական մթնոլորտի թարմ ազդեցության ներքո և կրում էին սոցիալ-քաղաքական իրադրության հաճախ անհարկի, սակայն խիստ ընդգծված դրոշմը[2]: Ամփոփելով 1920-1930-ական թվականների պատմագիտության վիճակը, այնուհետև ներկայացնում ենք հայ պատմագիտության զարգացման ընթացքը հետպատերազմյան շրջանում՝ 1945-1991 թվականներին: Այստեղ նախ պարզաբանում ենք 1940-ական թվականների առաջին կեսին Խորհրդային Հայաստանում տիրապետող դարձած գիտական աշխատանքների դադարը, որից հետո միայն ներկայացնում ենք հետպատերազմյան տարիներին պատմագիտության բնագավառում առկա հիմնական պատմագիտական ուղղությունները, պատմագիտական մամուլը, ինչպես նաև հայրենական ու սփյուռքահայ պատմագրության նշանավոր ներկայացուցիչների աշխատությունները[3]:

«Հայ պատմագիտության ներկա վիճակը և զարգացման հեռանկար-

---

[1] Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, Հակոբ Մանանդյան, Երևան, 1981, *նույնի*՝ Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը // «Ա. Գ. Հովհաննիսյան. պատմագիտական ուսումնասիրություններ», Էջմիածին, 2007, էջ 7-22, *նույնի*՝ Նիկողայոս Ադոնցը հայոց եկեղեցու պատմության պատմաբան, «Հայկազէան հայագիտական հանդէս», հ. ԺԷ, Բեյրութ, 1997, էջ 263-286, *նույնի*՝ Պատմագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2017, **Սարուխանյան Ն.**, Ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը, Երևան, 2015, *նույնի*՝ Խորհրդահայ պատմագրությունը 1920-1930-ական թվականներին, Երևան, 2016:

[2] Տե՛ս **Բարխուդարյան Վլ.**, Աշոտ Հովհաննիսյան (ծննդյան 100-ամյակի առթիվ) // «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1987, № 8, էջ 5, **Ներսիսյան Մ.**, Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982, էջ 262-263:

[3] Տե՛ս **Հարությունյան Շ.,** նշվ. աշխ., **Միրզախանյան Ռ.**, Մշակութային կյանքը Հայաստանում 1956-1966 թթ., Երևան, 2008, էջ 55-63, Հայոց պատմություն, ԳԱԱ ՊԻ, հ. IV, գիրք երկրորդ, Երևան, 2016, էջ 340-354:

ները» թեմայի շրջանակում անդրադառնում ենք պատմագրության ներկա վիճակին, ներկայացնում և վերլուծում ենք անկախության շրջանի պատմագրության ներկայացուցիչների պատմագիտական ժառանգությունը: Գաղտնիք չէ, որ Հայաստանում պատմագիտությունը խորհրդային իշխանության տարիներին, հատկապես առաջին շրջանում, գտնվում էր գաղափարա-քաղաքական կապանքների մեջ և չուներ լայն զարգացման հնարավորություններ: Այդ իսկ պատճառով հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի պատմության քաղաքական բնույթի մի շարք հիմնահարցեր ոչ միայն շրջանցվել են խորհրդահայ պատմաբան-ուսումնասիրողների կողմից, այլև միտումնավոր խեղաթյուրվել կամ հարմարեցվել են իշխող գաղափարախոսությանը: Ուստի, անկախության հռչակումից հետո մեր պատմաբաններին հնարավորություն ընձեռնվեց շարադրելու հնարավորինս անաչառ պատմություն: Անկախության շրջանի հայ պատմագրության մեջ կարելի է առանձնացնել պատմաբանների երկու խումբ, որոնցից առաջինը խորհրդահայ պատմագրության ավագ սերնդի ներկայացուցիչներն էին[1], որոնք շարունակում էին ապրել ու ստեղծագործել նաև հետխորհրդային շրջանում, իսկ երկրորդը՝ երիտասարդ սերնդի ներկայացուցիչները[2], որոնք անկախության պայմաննե-

---

[1] **Սիմոնյան Հ.**, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991, *նույնի՝* Անդրանիկի ժամանակը, երկու գրքով, Երևան, 1996, *նույնի՝* Ազատագրական պայքարի ուղիներում, հինգ գրքով, Երևան, 2003-2013, *նույնի՝* Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2009, *նույնի՝* 1912-1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը, Երևան, 2014, **Զոհրաբյան Է.**, 1920թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, *նույնի՝* Նախիջևանի հիմնահարցը և Հայաստանի «դաշնակիցները», Երևան, 2002, *նույնի՝* Նախիջևանյանհի մնահարցը, Երևան, 2010, **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, *նույնի՝* Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում XVI դարից 1917 թ., Երևան, 2004, **Խուրշուդյան Լ.**, Հայկական հարցը (բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը), Երևան, 1995, *նույնի՝* Հայոց ազգային գաղափարախոսություն, Երևան, 1999, *նույնի՝* Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, **Բարխուդարյան Վլ.**, Հայկական գաղթավայրեր, Երևան, 1991, **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006 և այլն:

[2] **Սիմոնյան Ա.**, Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, *նույնի՝* Զանգեզուրի գոյամարտը 1917-1921 թթ., Երևան, 2017, **Հակոբյան Ա.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1992, *նույնի՝* Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2005, *նույնի՝* Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կար-

րում փորձեցին նորովի ներկայացնել և գնահատել հայ ժողովրդի պատմության շատ հիմնահարցեր:

սի պայմանագրերում, Երևան, 2010, *նույնի*՝ Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում, Երևան, 2016, *նույնի*՝ Հայաստանի հանրապետությունը 1918-1920 թթ., Երևան, 2018, *նույնի*՝ Հ.Յ. Դաշնակցություն կուսակցությունը լուծարելու Հայկոմկուսի փորձերը 1920-ական թվականներ, Երևան, 2020, **Հարությունյան Հ.**, Լեռնային Ղարաբաղը 1918-1921թթ., Երևան, 1996, *նույնի*՝ Նոր Բայազետի գավառը 1828-1913 թվականներին, Երևան, 2008, *նույնի*՝ Նոր Բայազետի գավառը 1914-1920 թվականներին, Երևան, 2012, **Մելքոնյան Ա.**, Էրզրում, Երևան, 1994, *նույնի*՝ Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 2001, **Մովսիսյան Ա.**, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, *նույնի*՝ Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան, 2021, **ՆերսիսյանԱ.**, Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908 թթ., Երևան, 1999, *նույնի*՝ Հ.Յ.Դաշնակցութեան պատմութիւն (1898-1908), հ. Բ, Բէյրութ, 2008, հ. Գ, Բէյրութ, 2013, *նույնի*՝ Կարո Սասունի, Երևան, 2004, *նույնի*՝ Զորավար Սեպուհ, Երևան, 2005, *նույնի*՝ Ռուբեն, Երևան, 2007, **Գրիգորյան Հ.**, Հայ ազատագրական պայքարի մարտավարությունը 1895-1898թթ., Երևան, 2002, *նույնի*՝ Հայոց ազատամարտի զինման և ֆինանսավորման խնդիրը (1890-1908), Երևան, 2004, **Մինասյան Է.**, Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, 2013, *նույնի*՝ Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, 2003, **Ստեփանյան Խ.**, Ռուբեն Տեր-Մինասյան (կյանքը և գործը), Երևան, 2008, *նույնի*՝ 1921 թ. Փետրվարյան ապստամբության պատճառները և հետևանքները սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Երևան, 2016, *նույնի*՝ 1921 թ. Փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, 2021, *նույնի*՝ Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատման հիմնահարցը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (1920-1930-ական թթ.), Անթիլիաս, 2021, **Խաչատրյան Կ.**, Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, **Խաչատրյան Կ.**, **Սուքիասյան Հ.**, **Բադալյան Գ.**, Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Երևան, 2020, **Եղիազարյան Ա.**, Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանը (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2010, *նույնի*՝ Հայ Բագրատունիների տերությունը 885-908 թթ. (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2011, *նույնի*՝ Աշոտ Ա Բագրատունի (թագավորության թվականը և գահակալության տարիները), Երևան, 2014, *նույնի*՝ Աշոտ Երկաթ. թագավոր Հայոց, Երևան, 2016, *նույնի*՝ Աբաս Բագրատունի. թագավոր Հայոց, Երևան, 2017 և այլն:

Եզրակացություն

Այսպիսով, դասընթացի ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հմտությունների ու կարողությունների շնորհիվ ուսանողները կկարողանան ներկայացնել «Հայոց պատմության պատմագրության» հիմնական բովանդակությունը, զարգացման փուլերն ու բնութագրական գծերը: Ուսումնառության արդյունքում ձեռք բերված գիտագործնական կարողությունների արդյունքում ուսանողները կկարողանան վերլուծել բնագրեր, մեկնաբանել պատմագիտական հետազոտություններ, նկարագրել պատմագիտական դպրոցների գործունեությունը և քննադատական, վերլուծական մոտեցում ցուցաբերել պատմագիտական աշխատությունները գնահատելիս:

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները կկարողանան համադրել պատմագիտական հետազոտությունների արդյունքները, համապատասխան գիտական տեսության հետ հիմնավորել պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը, մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ և լուծումներ:

Բանալի բառեր՝ *պատմագրություն, դասընթաց, մեթոդ, վերջնարդյունք, հետազոտական բաղադրիչ, ակտիվ ուսուցում, գիտելիք, վերլուծական կարողություն:*

ОБ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ УНИВЕРСИТЕТСКОГО КУРСА «ИСТОРИОГРАФИЯ АРМЯНСКОЙ ИСТОРИИ»

Ара Азатян

Ключевые слова: *историография, курс, метод, конечный результат, исследовательский компонент, активное обучение, знание, аналитические способности.*

Курс «Историография истории Армении» является одним из важнейших предметов образовательной программы «История» бакалавриата. Он изучает всю историческую мысль и, анализируя исторические труды, акцентирует внимание историков на постановке тех или иных проблем, их анализе и даче адек-

ватных решений. «Историография истории Армении» обобщает работу, проделанную предыдущими поколениями, в то же время раскрывает научные проблемы, которые еще не изучены или не изучены объективно и нуждаются в научном исследовании.

Курс «Историография Армянской истории» имеет не только научно-исследовательское, но и учебно-методическое и практическое значение.

Цель курса «Историография Армянской истории» – познакомить студентов с пройденным путем армянской истории, от пред-письменного периода до современного состояния историографии.

В течении курса студентам преподносятся методологические знания по постановке задач и их решению, ведется активное обучение, когда студент не только слушает, но и думает, обсуждает и исследует определенные проблемы. Курс имеет исследовательскую составляющую, в ходе выполнения которой у студентов развиваются аналитические способности.

Целью данной статьи было представить и проанализировать значимость, актуальность, цель, задачи, основные методы преподавания курса «Историография Армянской истории», темы и особенности его преподавания, а также ожидаемые результаты по окончании курса.

ABOUT PECULIARITIES OF TEACHING THE UNIVERSITY COURSE "HISTORIOGRAPHY OF ARMENIAN HISTORY"

Ara Azatyan

Key Words: *historiography, course, method, final result, research component, active learning, knowledge, analytical ability.*

The "Historiography of Armenian History" course is one of the most important subjects of the "History" educational program of the bachelor. It studies the whole of historical ideas and, analyzing the historical works, focuses the attention of historians on raising certain problems, analyzing them and giving adequate solutions. "Historiography of Armenian History" summarizes the work done by previous generations, at the same time reveals the scientific problems that have not yet been studied or have not been studied objectively and need scientific research.

The course "Historiography of Armenian History" has not only scientific significance, but also educational, methodological and practical ones.

The aim of the course "Historiography of Armenian History" is to acquaint students with the path of Armenian history, from the preliterate period to the current state of historiography.

During the course, students are taught methodological knowledge on problem setting and their solutions, an active learning is conducted when the students not only listen, but also think, discuss and explore certain problems. The course has a research component, during the performance of which the students develop analytical skills.

The purpose of this article was to present and analyze the significance, relevance, purpose, objectives, main methods of teaching the course "Historiography of Armenian History", the topics and features of its teaching, as well as the expected results at the end of the course.

Արա Ազատյան, *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ, պատմական գիտությունների թեկնածու*

Ara Azatyan, *Ассистент кафедры истории армянского народа и социальных наук Иджеванского филиала ЕГУ, кандидат исторических наук*

Ara Azatyan, *Assistant at the Chair of Armenian History and Social Sciences of YSU Ijevan Branch, PhD in History*